

26. 418

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏ

336

Խ-61

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ
ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ՅԵՐՐՈՐԴ ԶՆԳԱՄՅԱԿԻ

(ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ)

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

336

Խ-61

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 4 0

2508
40

ЧТО НАДО ЗНАТЬ

Комиссии содействия государственному
кредиту и сберегательному делу о Зай-
ме Третьей Пятилетки (выпуск третьего
года)

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՌԱՅՈՒՄ ԵՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Լենինի գործի հանճարեղ շարունակող ընկեր Ստալինը Հա-
մախոթեցական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցու-
թյան 18-րդ համագումարում ամփոփեց սոցիալիզմի համաշ-
խարհային պատմական հաղթանակների արդյունքները մեր յերկ-
րում: «Գլխավոր արդյունքն այն է, — ասում էր ընկեր Ստա-
լինը, — վոր մեր յերկրի բանվոր դասակարգը, վոչնչացնելով
մարդու շահագործումը մարդու կողմից և հաստատելով սոցիա-
լիստական կարգեր, ամբողջ աշխարհին ապացուցեց իր դործի
արդարութունը: Այդ է գլխավոր արդյունքը, վորովհետև
նա ամբապնդում է հավատը՝ դեպի բանվոր դասակարգի ուժե-
րը և դեպի նրա վերջնական հաղթանակի անխուսափելիու-
թյունը»:

Մեր յերկրում հիմնականում կառուցված է սոցիալիզմը և
կենսագործվում է աստիճանաբար անցումն սոցիալիզմից դեպի
կոմունիզմը: ԽՍՀՄ դարձել է հզոր ինդուստրիալ պետություն,
սոցիալիստական, աշխարհում ամենաառաջավոր և խոշոր գյու-
ղատնտեսական յերկիր: Հարկավոր է յին ԽՍՀՄ-ի աշխատավոր-
ների իսկապես հերոսական ջանքեր այն բանի համար, վորպես-
զի բոլշևիկյան կուսակցության ղեկավարութամբ, վորին գըլ-
խավորում է ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը,
արտասովոր կարճատև ժամկետում հաղթանարել ցարական
Ռուսաստանից ժառանգություն ստացած հետամնացությունը և
դուրս բերել մեր յերկիրը առաջին տեղերից մեկը՝ աշխարհում:

Հիշենք այն բնութագրերը, վոր տվել է Վ. Ի. Լենինը ցա-
րական Ռուսաստանի եկոնոմիկային՝ առաջին իմպերիալիստա-
կան պատերազմի նախորդակին: Լենինը գրում էր. «Ռուսաստա-
նը մնում է վորպես աներեակայելի, չտեսնված չափով հետամ-
նաց յերկիր՝ աղքատ ու կիսավայրենի, սարքավորված արտադ-
րության ժամանակակից դործիքներով քառասույսիկ ավելի վատ

Անդրխայից, հինգ անգամ ավելի վատ Գերմանիայից, տասնապատիկ ավելի վատ Ամերիկայից»:

Իսկ այժմ մեր արդյունաբերության և գյուղատնտեսության հիմքը կազմում է նոր, ժամանակակից տեխնիկան: Արտադրության տեխնիկայով և մեր արդյունաբերության այժմյան տեմպերով մենք առաջ անցանք առաջավոր կապիտալիստական յերկրներից:

ԽՍՀՄ- բաժինը՝ համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում, աճեց մինչև 15,8 տոկոսի՝ 1913 թվին յեղած 2,7 տոկոսի դիմաց: Արդյունաբերական արտադրության ծավալով մեր յերկիրը վոչ միայն հասավ, այլ նաև անցավ Գերմանիայից, Անդրխայից և Ֆրանսիայից, և հաստատապես գրավում է առաջին տեղը Յեվրոպայում, իր առաջ ունենալով միայն Ամերիկայի միացյալ Նահանգները: Արդյունաբերության մի շարք ճյուղերի արտադրանքի ծավալով խորհրդային Միությունը գտնվում է առաջին տեղում աշխարհում:

Կոլտնտեսային կարգը հաղթանակելու հետևանքով՝ ԽՍՀՄ-ի գյուղատնտեսությունն իր դարգացման տեմպերով առաջ անցավ կապիտալիստական յերկրների գյուղատնտեսությունից: ԽՍՀՄ առաջին տեղն է գրավում աշխարհումս ինչպես ցանքսի տարածությամբ, այնպես էլ կարևորագույն կուլտուրաների — ցորենի, հաճարի, դարու, վարսակի, վուշի և շաքարի ճակնդեղի բերքահավաքով:

ԽՍՀՄ-ի գյուղատնտեսությունը հաղեցված է առաջավոր տեխնիկայով: Կոլտնտեսային և խորհրդային դաշտերում աշխատում են 500-900 տրակտորներ, 168-900 կոմբայներ և 216-300 բեռնատար ավտոմեքենաներ: Վոչ մի կապիտալիստական յերկրում գյուղատնտեսությունը չունի նման հզոր տեխնիկա: Մի-միայն կոմբայները մեղ մոտ յերկու անգամ ավելի յեն, քան բոլոր կապիտալիստական յերկրներում միասին վերցրած:

Մենք այդ բոլոր հաջողությունները ձեռք բերինք շնորհիվ տնտեսության սոցիալիստական սիստեմի անսահման առաջելու-թյանը կապիտալիստական սիստեմից: Այնպիսի տեմպեր, ինչպիսի տեմպերով դարգանում է մեր արդյունաբերությունը, պատմությունը դեռ չի տեսել: Նման տեմպերը հնարավոր չեն կապիտալիզմի ժամանակ: Այն ժամանակ, յերբ գլխավոր կապիտալիստական յերկրների արդյունաբերությունը 25 տարվա ընթացքում չի կարող առաջ շարժվել ավելի, քան 20-30 տոկոս

մինչպատերազմյան մակարդակի համեմատությամբ, ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքն արդեն 1938 թվին ավելի քան 9 անգամ անցնում էր մինչպատերազմյան մակարդակից, իսկ յերրորդ հնգամյակի վերջում 15 անգամ կանցնի նրանից:

Այդ թվերում և փաստերում արտահայտվում է սոցիալիստական տնտեսության արագընթաց և անչեղ աճումը և կապիտալիստական յերկրների՝ տեղում քարշ յեկող տնտեսության նեխումը: Այդ թվերում յերեան է գալիս սոցիալիստական մըրցման և սոախանովական շարժման հզոր ուժը, վորն աշխատանքի արտադրողականության նորանոր բարձունքների հաղթանակ և ապահովում մեր յերկրին:

Ստալինյան հնգամյակների հաղթական կատարումն առաջ բերեց մեր յերկրի արտադրական ուժերի չտեսնված ծաղկում և քաղաքի ու կոլտնտեսային գյուղի աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի անչեղ վերելք: ԽՍՀՄ-ում վերջնականապես վերացել է դործազրկությունը, վերացել է աղքատությունը գյուղում: Տարեցտարի ավելանում է բանվորների ու ծառայողների աշխատավարձը: Աճում են կոլտնտեսականների յեկամուտները: Պետությունն ամեն տարի հսկայական դոմարներ է ծախսում լուսավորության, առողջապահության և աշխատավորների մյուս կուլտուր-կենցաղային կարիքների համար: Հառկացումներն այդ նպատակների համար աճեցին 1933 թվին յեղած 5,8 միլիարդ ուրբուց մինչև 38,3 միլիարդ ուրբուց՝ 1939 թվին: 1940 թվին կուլտուրական ձեռնարկումների համար ծախսվելու յե 43 միլիարդ ուրբլի: ԽՍՀՄ-ի բնակչության գըրադիտությունը 1926 թվին յեղած 51,1 տոկոսից բարձրացավ մինչև 81,2 տոկոսի՝ 1939 թվին, այն ժամանակ, յերբ ցարական Ռուսաստանում 1897 թվին գրադետներ էյին ընդամենը 24 տոկոսը: Խորհրդային Միության մեջ 14,3 միլիոն քաղաքացիներ ունեն բարձրագույն և միջնակարգ կրթություն: Դա — կուլտուրական հեղափոխության արդյունքն է, վորն արվել է յերկրում՝ Լենինի-Ստալինի կուսակցության ջանքերով:

ԽՍՀՄ-ը յերրորդ հնգամյակում մտավ դարգացման նոր շըջան, անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման ավարտման և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շըջանը:

ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում ընկեր Ստալինը պատմական խնդիր դրեց մեր յերկրի առաջ — մոտակա 10-15 տարվա ըն-

թացքում հասնել և առաջ անցնել գլխավոր կապիտալիստական յերկրներէից նաև տնտեսական տեսակետից, այսինքն՝ բնակչութեան մեկ հոգուն ընկնող արդյունաբերութեան արտադրանքի չափի իմաստով:

«Միայն այն դեպքում, — ասում եր ընկեր Ստալինը, — յեթե տնտեսապէս անցնենք կապիտալիստական գլխավոր յերկրներէից, մենք կարող ենք հուշա ունենալ, վոր մեր յերկրը լիովին հաղեցված կլինի սպառման առարկաներով, մեզ մոտ կլինի մթերքների առատութիւն, և մենք հնարավորութիւն կունենանք կոմունիզմի առաջին ֆազից անցում կատարելու դեպի նրա յերկրորդ ֆազը»:

18-րդ կուսամասումարի կողմից ընդունված մեր յերկրի ժողովրդական տնտեսութեան զարգացման յերրորդ հնգամյա պլանի կատարումը հսկայական չափով կմոտեցնի մեզ ընկեր Ստալինի կողմից դրված ԽՍՀՄ-ի այդ հիմնական տնտեսական խնդրի կատարմանը:

Կուսակցութեան 18-րդ համագումարից հետո անցած տարին բնորոշ է յերրորդ հնգամյա պլանի կատարման դործում ունեցած հսկայական հաջողութիւններով: Պետական արդյունաբերութեան արտադրանքը 1939 թվի ընթացքում նախընթաց տարվա համեմատութեամբ՝ աճեց 14,7 տոկոսով: Հացահատիկային կուլտուրաների բերքը, չնայած անբարենպաստ կլիմայական պայմաններին, գերազանցեց 1938 թ. բերքից: Մանրածախս ապրանքաշրջանառութիւնն ավելացավ 16,7 տոկոսով: Ապրանքների լիջին որակն բեռնավորումը յերկաթուղիներում բարձրացավ 6,1 տոկոսով:

Մայիսի 15-ին բացված Համամիութենական գյուղատնտեսական 1940 թվի ցուցահանդեսը ցուցադրում է նոր խոշորագույն հաղթանակներ, վորպիսիք ձեռք է բերել խորհրդային յերկրի սոցիալիստական գյուղատնտեսութիւնը: Նա հանգիստնում է կոլտնտեսային կարգի հետագա ամրացման, կոլտնտեսութիւնների հարստութեան աճման և կոլտնտեսային գյուղացիութեան ունեւորութեան ամենավառ վկայութիւնը:

1940 թիւը — մեր ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի հետագա հզոր վերելքի տարի յէ: Արդյունաբերութեան ապրանքային արտադրանքը մեծանալու յէ 13,6 տոկոսով, աշխատանքի արտադրողականութիւնն արդյունաբերութեան մեջ բարձրանալու յէ 11 տոկոսով: Արտադրանքի ինքնարժեքն իջնե-

լու յէ 2,8 տոկոսով: Բնակչութեան ապրանքներ կատանա 15,7 տոկոսով ավելի, քան 1939 թվին:

Այդ բոլոր թվերը խոսում են այն մասին, վոր ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութիւնը, վորը ճշմարտեր և ցնցումներ չըդիտե, անհեղորեն ընթանում է հետագա ծաղկման ուղիով:

1940 թիւը լինելու յէ ԽՍՀՄ-ի պաշտպանունակութեան հետագա ամրապնդման տարի: Կապիտալիստական աշխարհում փութորկում է յերկրորդ իմպերիալիստական պատերազմի բոցը, վորն ընդգրկում է նորանոր յերկրներ, իսկ սոցիալիզմի յերկրն ոգտվում է խաղաղութեան բարիքներից: Խաղաղ աշխախատանքի այդ հնարավորութեամբ մենք պարտական ենք ստալինյան իմաստուն արտաքին քաղաքականութեանը, վորն ուղղված է ապահովելու մեր հայրենիքի անվտանգութիւնը, և խաղաղութիւնը՝ ժողովուրդների միջև: Դրանով մենք պարտական ենք քաջարի Կարմիր Բանակի և փառապանծ Ռազմա-Մովային Նավատորմի անհաղթ հզորութեանը, վորոնք մի անգամ չէ, վոր ջախջախիչ հարվածներ են հասցրել ԽՍՀՄ-ի սրբազան սահմանների դեմ վտանգութեան փորձ անող թշնամիներին:

Խառան լճի և Խալխին-Գոլ գետի մոտ տեղի ունեցած մարտերում, ազատարար արշավանքում դեպի Արևմտյան Ուկրաինա և Արևմտյան Բելոռուսիա, Ֆիննական սպիտակ-գվարդիականներէի դեմ մղված պայքարում սոցիալիզմի յերկրի քաջարի բանակն ամբողջ աշխարհով մեկ հռչակեց խորհրդային զենքը: Մեր Կարմիր Բանակը խորատակեց անառիկ համարվող «Մաններհեյմի դիւմը», ջախջախեց թշնամուն, ապահովեց Լենինի քաղաքի և ԽՍՀՄ-ի հյուսիս-արևմտյան սահմանների անվտանգութիւնը: Խորհրդային ժողովուրդը այսուհետև ևս ամեն կերպ կամրացնի մեր բանակի և նավատորմի մարտական հզորութիւնը, վորպեսզի վոչ վոքին հաճելի չլինի իրենց խողի դուռնը կոխել մեր խորհրդային բանջարանոցը:

Մեր սոցիալիստական շինարարութեան նշանավոր առանձնահատկութիւնն այն է, վոր մենք զարգացնում ենք տնտեսութիւնը և կուլտուրան, ամրացնում ենք յերկրի հզորութիւնը ներքին միջոցների հաշիւին, առանց դրսի ստրկացուցիչ վարկերի և փոխառութիւնների: Կուսակցութեան հիմնական և վճռական ազդրը մեր յերկրում հանդիսանում է սոցիալիստական տնտեսութիւնը: ԽՍՀՄ-ի պետական բյուջեի յեկամոններում այդ կուսակցութեանը գրավում են համարյա 90 տոկոսը և այդ-

պիտով ապահովում են մեր տնտեսական և կուլտուրական դարձացման և պաշտպանական ձեռնարկումների ամբողջ վիթխարի ծրագրի ֆինանսավորումը:

Սոցիալիստական շինարարության ֆինանսավորման դործում փոքր դեր չեն խաղում աշխատավորների ազատ խնայողությունները, վորպիսիք պետությունը ներդրում է պետական փոխառությունների միջոցով, ինչպես և ոգտադործելով բնակչության ավանդները խնայողական դրամարկղներում:

Այն մասին, թե ինչ նշանակություն ունեն բնակչության խնայողությունները սոցիալիստական շինարարության ֆինանսավորման դործում, կարելի չե դատել հետևյալ տվյալներով: Ստալինյան հնգամյակների նախընթաց տարիներին ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների ընդհանուր դումարում փոխառությունից ստացված մուտքերը և խնայողական դրամարկղերին տրված ավանդները կազմում էին 5 տոկոս, առաջին հնգամյակի տարիներին — 13,7 տոկոս, յերկրորդ հնգամյակի տարիներին — 19,4 տոկոս: Յերրորդ հնգամյակում փոխառությունից և ավանդներից ստացվող մուտքերի տեսակարար կընդուն կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում աճելու յե ել ավելի:

Պետական փոխառությունների թողարկումը ԽՍՀՄ-ում անփոփոխաբար հանդիպում է աշխատավորների ջերմ աջակցությանը: Խորհրդային փոխառությունների հաջողության վառ ցուցանիշը հանդիսանում են Յերրորդ Հնգամյակի (յերրորդ աարվա բաժնի) փոխառության իրացման արդյունքները: Այդ փոխառությունն չտեսնված կարճ ժամկետում իրացվեց դերագանցելով թողարկման դումարը 1,6 միլիարդ ուրբլի: Ստալինյան հնգամյակների տարիներին մեր յերկրի աշխատավորները փոխառության պարտատոմսեր ձեռք բերելու միջոցով պետությունը տրամադրեցին ավելի քան 36 միլիարդ ուրբլի: Դրանով արտահայտվում է և խորհրդային ժողովրդի նյութական բարեկեցության անընդհատ վերելքը:

Կապիտալիստական յերկրներում պետական փոխառությունները ծառայում են տիրող դասակարգի շահերին, այսինքն՝ բուրժուազիայի շահերին և ոգտադործվում են իմպերիալիստական պատերազմներ նախապատրաստելու և վարելու համար, աշխատավորների հետագա ստրկացման և ճնշման համար: Այնտեղ փոխառությունները նոր հարկային ծանրություն են աշ-

խատավորների համար, իսկ կապիտալիստների համար — լրացուցիչ շահույթ:

Պետական փոխառությունների միջոցով ներդրավող միջոցները ԽՍՀՄ-ում ոգտադործվում են ժողովրդի շահերի համար: Այդ միջոցները դնում են ժողովրդական տնտեսության, կուլտուրայի և յերկրի պաշտպանության ֆինանսավորման համար: Խորհրդային փոխառությունները զգալի յեկամուտներ են բերում պարտատոմս պահողներին: Մինչև 1940 թվականը պետությունը նրանց վճարել է մոտ 6,5 միլիարդ ուրբլու տոկոսներ և շահումներ (ներառյալ մարված պարտատոմսերի արժեքը): Այդ բոլորը հսկայական ժողովրդականություն ստեղծեց մեր փոխառությունների համար: Միահամուռ կերպով բաժնեգրվելով փոխառությանը՝ ԽՍՀՄ-ի աշխատավորները ջերմ ձգտում են ցույց տալիս այսուհետև ևս իրենց միջոցներով ամբացնել յերկրի տնտեսական և պաշտպանական հզորությունը, ցուցարկելու են իրենց միասնությունը և սերը դեպի հայրենիքը, իրենց նվիրվածությունը կոմունիստական կուսակցությանը, խորհրդային կառավարությանը, մեծ Ստալինին:

Ներկա տարվա ժողովրդատնտեսական ընդարձակ ծրագիրը պահանջում է հսկայական ֆինանսական ծախսեր: ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի VI սեսիայի կողմից հաստատված ԽՍՀՄ-ի 1940 թ. պետական բյուջեն 183,9 միլիարդ ուրբլի դումարով ապահովում է այդ ծրագրի ֆինանսավորումը: Այս տարի ավելի քան 57 միլիարդ ուրբլի ծախսվելու յե ժողովրդական տնտեսության զարգացման համար, 43 միլիարդ ուրբլի տրվում է կուլտուրական ձեռնարկումներին, 57 միլիարդ ուրբլի հատկացված է յերկրի պաշտպանության ամրապնդման դործին:

Պետական բյուջեյի յեկամային աղբյուրներից մեկը 1940 թվին հանդիսանում է կառավարության կողմից թողարկված Յերրորդ Հնգամյակի (յերրորդ տարվա բաժնի) փոխառությունը: Այդ փոխառության անունը վկայում է նրա նշանակման մասին: Նա պետք է նպաստի 1940 թվի ժողովրդատնտեսական պլանի կատարմանը և ԽՍՀՄ-ի պաշտպանության հետագա ամրապնդմանը: Տարակույս չկա նրանում, վոր այդ փոխառությունը, ինչպես և նախընթացները, մեր ժողովրդի կողմից կընդունվի մեծ վողեորությունով: Ակտիվորեն բաժնեգրվելով փոխառությանը բանվորները, կուլտնտեսականները, խորհրդային կոմերիկենցիան կողենև ստալինյան յերրորդ հնգամյակի կողմից

գլխավոր մեծ խնդիրները իրականացմանը, կողմն են արագացնելու մեր շարժումը դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը:

ՅԵՐՐՈՐԴ ԷՆԳԱՄՅԱԿԻ (ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ) ՓՈՆԱ-
ՌՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՅԵՎ ԻՐԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յերրորդ Հնգամյակի (յերրորդ տարվա բաժնի) փոխառու-
թյունը հանդիսանում է ԽՍՀՄ-ի բոլոր պետական փոխառու-
թյուններից ամենախոշորը: Այն թողարկված է 8 միլիարդ ռուբ-
լի գումարով:

Փոխառության ժամկետն է՝ 20 տարի— 1940 թվի դեկտեմ-
բերի 1-ից մինչև 1960 թվի դեկտեմբերի 1-ը:

Նոր փոխառությունը, ինչպես նաև նախընթացները, թո-
ղարկված են տարեկան 4 տոկոսի հաշվով, այսինքն՝ յեկամուտ-
ների գումարը, վորպիսին վճարվելու յե պետության կողմից
պարտատոմսատերերին՝ փոխառության քանամյա ժամկետի
ընթացքում, կազմում է միջին հաշվով տարեկան 4 տոկոս:

Փոխառությունը բաղկացած է յերկու մասերից՝ անպայման
շահող և տոկոսաբեր: Այդ մասերից յուրաքանչյուրը հանդիսա-
նում է փոխառության մի ինքնուրույն մասը և մեկը մյուսից
տարբերվում է յեկամուտը պարտատոմսատերերին վճարելու ձե-
վով:

Անպայման շահող մասի պարտատոմսերով յեկամուտը վը-
ճարվում է շահումների ձևով: Յուրաքանչյուր պարտատոմս
փոխառության քանամյա ժամկետի ընթացքում անպայման մեկ
անգամ շահում է:

Տոկոսաբեր մասի պարտատոմսատերերը յեկամուտը յուրա-
քանչյուր պարտատոմսով ստանում են վոչ թե շահումների ձե-
վով, այլ տոկոսների ձևով՝ պարտատոմսին կից կտրոններով:

Փոխառությունը թողարկված է զանազան արժողություն
ունեցող պարտատոմսերով: Փոխառության անպայման շահող
մասում կան 500, 200, 100, 50, 25 և 10 ռ. արժողություն ու-
նեցող պարտատոմսեր, իսկ տոկոսաբեր մասում— 500, 200,
100 և 25 ռ. արժողություն ունեցող պարտատոմսեր:

Հիմնականը հանդիսանում է 100 ռուբլիանոց պարտատոմսը:
50, 25 և 10 ռուբլիանոց պարտատոմսերը կազմում են (համա-
պատասխանաբար— կես, մեկ քառորդ կամ մեկ տասներորդ
մասը) հարյուր ռուբլիանոց պարտատոմսի մասերը, իսկ 500 ռ.
և 200 ռուբլիանոց պարտատոմսերն իրենցից ներկայացնում են

համապատասխանաբար հինգ կամ յերկու հարյուր ռուբլիանոց
պարտատոմսեր և ունեն հինգ կամ յերկու համարներ:

Փոխառության անպայման շահող մասով սահմանված են
3000, 1000, 500, 200 և 150 ռուբլու շահումներ՝ հարյուր ռուբ-
լիանոց պարտատոմսերի համար: Այդ գումարների մեջ է մըս-
նում նաև շահած պարտատոմսերի անվանական արժեքը, վորով-
հետև շահած պարտատոմսը մարվում է և հետագա խաղարկու-
թյուններին չի մասնակցում:

50, 25, և 10 ռ. արժողություն ունեցող պարտատոմսերով
վճարվում է շահումի համապատասխան ($1/2$, $1/4$ կամ $1/10$), վորն
ընկնում է հարյուր ռուբլիանոց պարտատոմսին: 500 կամ 200
ռ. արժողություն ունեցող պարտատոմսերով միանգամից վը-
ճարվում է համապատասխանաբար հինգ կամ յերկու շահում,
վորոնք միաժամանակ ընկնում են պարտատոմսի վրա յեղող
հինգ կամ յերկու համարներից յուրաքանչյուրին:

Փոխառության անպայման շահող մասով քանամյա ժամ-
կետի ընթացքում կխաղարկվի այնքան շահումներ, վորքան վոր
պարտատոմսեր կան: Փոխառության յուրաքանչյուր 100 միլիոն
ռուբլուն կամ յուրաքանչյուր մեկ միլիոն պարտատոմսերին ընկ-
նում է 80 շահում 3000-ական ռուբլու, 400 շահում 1000-ական
ռուբլու, 8000 շահում 500-ական ռուբլու, 110-400 շահում
200-ական ռուբլու և 881-120 շահում 150-ական ռուբլու:

Յուրաքանչյուր տարի, սկսած 1941 թվից, փոխառության
անպայման շահող մասով տեղի կունենան շահումների չորս խա-
ղարկություն: Փոխառության քանամյա ժամկետի ընթաց-
քում ընդամենը տեղի կունենան շահումների 80 խաղարկու-
թյուն: Առաջին խաղարկությունը տեղի կունենա փոխառու-
թյան բաժնեդրության վճարումն ավարտելուց հետո— 1941 թը-
վի հունիսին:

1941 թվին տեղի ունեցող չորս խաղարկություններից յու-
րաքանչյուրում կխաղարկվի 12-000-ական շահումներ՝ մեկ մի-
լիոն պարտատոմսերի համար: Այդ նշանակում է, վոր փոխա-
ռության չրջանառության դեռ առաջին տարում 20—21 պար-
տատոմսին միջին հաշվով ընկնում է մեկ շահում: Շահումների
նման քանակ է խաղարկվելու և հետևյալ տարում: Առաջին հինգ
տարում շահելու յե յուրաքանչյուր չորրորդ—հինգերորդ պարտա-
տոմսը: Հետագայում աստիճանաբար շահելու յեն բոլոր պար-
տատոմսերն ասանց բացառության:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի տոկոսները վճարվում են յուրաքանչյուր տարին անցնելուց հետո, սկսած 1941 թվի դեկտեմբերի 1-ից: Դրա համար՝ տոկոսաբեր մասի յուրաքանչյուր պարտատոմսին կից կան 20 կտրոններ: Յուրաքանչյուր տարի, ամեն մի կտրոնով վճարվում է պարտատոմսի անվանական արժեքի 4 տոկոսը: Այդպիսով, փոխառության 20-ամյա ժամկետի ընթացքում տոկոսաբեր մասի յուրաքանչյուր հարյուր ռուբլի-անոց պարտատոմսով կվճարվի 80 ռուբլի, հինգ հարյուր ռուբլի-անոց պարտատոմս ունեցողը կստանա 400 ռուբլի յեկամուտ և այլն: Յուրաքանչյուր կտրոնի վրա նշված է նրա վճարման ժամկետը, նաև այն դումարը, վորպիսին վճարվում է այդ կտրոնով:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի արժեքը պետությունը վերադարձնում է աստիճանաբար, 20 տարվա ընթացքում, չահումների վճարման չափով, վորովհետև յուրաքանչյուր չահում-մի դումարի մեջ մտնում է պարտատոմսի անվանական արժեքը և չահած պարտատոմսը մարվում է՝ չահումը նրանով վճարելուց հետո: Նման կարգով դեռ 1941 և 1942 թվականներին ընթացքում վճարվելու յե բոլոր պարտատոմսերի մոտ 10 տոկոսը:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի արժեքի վերադարձը պետության կողմից՝ տեղի կունենա 1956 թվի դեկտեմբերի 1-ից մինչև 1960 թվի դեկտեմբերի 1-ը յեղած ժամանակամիջոցում: Յուրաքանչյուր տարի հետ կգնվի տոկոսաբեր մասի պարտատոմսերի ամբողջ դումարի մեկ հինգերորդ մասը: Հետ դման յենթակա պարտատոմսերի համարները վորոշելու համար տեղի կունենա մարման հատուկ խաղարկություններ:

Փոխառության պարտատոմսերի չահումներն ու տոկոսները, ինչպես նաև իրենք պարտատոմսերը, անկախ դումարից, ազատված են պետական և տեղական հարկադրումից:

Այն միջոցների զգալի մասը, վորպիսիք մուտք են լինելու փոխառությունից, տրվում են միութենական հանրապետությունների տեղական բյուջեներին, նաև քաղաքներին, շրջանների և դյուդխորհուրդների բյուջեներին՝ տեղական տնտեսական և կուլտուրական շինարարության համար: Քաղաքների, շրջանների և դյուդխորհուրդների բյուջեներին տրվում են բան-վորների և ծառայողների բաժնեգրությամբ մուտք յեղած բո-լոր միջոցների 25 տոկոսը, կուտնտեսականների ու մենատնտե-

դյուդխաղներին բաժնեգրությունից ստացվող մուտքերի 90 տո-կոսը:

Յուրաքանչյուր աշխատավոր կարող է իր ցանկությամբ բաժնեգրվել փոխառությանը անպայման չահող կամ տոկոսա-բեր մասի պարտատոմսերի համար: Բաժանորդը նույնպես ինքն է ընտրում այն պարտատոմսերի արժողությունը, վորպիսիք ցանկանում է ստանալ: Կարելի յե միանգամից բաժնեգրվել դա-նադան մասերի և արժողության պարտատոմսերի համար: 25 և 10 ռուբլի-անոց պարտատոմսերը նշանակվում են բաժանորդ-ների հետ հաշվարկումներ կատարելու համար միայն այն դեպ-քերում, յերբ բաժնեգրության դումարից յեկնելով, չեն կարող արվել ավելի խոշոր արժողություն ունեցող պարտատոմսեր:

Բանվորները, ծառայողները, տեխնիկումներին, դասընթաց-ների, բարձրագույն դպրոցների ուսանողները, տնայնագործնե-րը, թոշակառուները, տնային տնտեսուհիները— իմ շՄ-ի բոլոր աշխատավորները կարող են ձեռք բերել Յերրորդ Հնդամյակի (յերրորդ տարվա բաժնի) փոխառության պարտատոմսեր՝ ցան-կացած դումարով, պարտատոմսերի արժեքը վճարելով մաս-մաս՝ 10 ամսվա ընթացքում— 1940 թվի հուլիսից մինչև 1941 թվի ապրիլը:

Բանվորներն ու ծառայողները փոխառության բաժնեգրու-թյունը վճարում են իրենց աշխատավարձից ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահության միջոցով: Նույն կար-գով են վճարում փոխառության բաժնեգրության մուծումնե-րը կոոպերացված տնայնագործները՝ արտելի վարչությունից ստացվող աշխատավարձից, նաև ուսանողները— ուսումնական հաստատության հաշվապահության միջոցով ստացվող թոշա-կից:

Փոխառության բաժնեգրության առաջին մուծումը բան-վորներն ու ծառայողները վճարում են 1940 թվի հուլիս ամս-վա առաջին կեսի համար հասնող աշխատավարձից, իսկ վերջին մուծումը— 1941 թվի ապրիլ ամսվա յերկրորդ կեսի աշխա-տավարձից:

Առաջին մուծումը վճարելու համար սահմանված ժամկե-տից հետո փոխառությանը բաժնեգրված աշխատողներն իրենց բաժնեգրության ամբողջ դումարը վճարում են մինչև մաս-մաս վճարումների ժամկետի ավարտումը մնացած ժամանակի ընթացքում:

Փոխառութեան պարտատոմսերը բաժանորդներին տրվում են բաժնեգրութեան վերջին մուծումը վճարելու հետ միաժամանակ: Իրենց բաժնեգրութեան տեղում պարտատոմսեր չըստացած բանվորներն ու ծառայողները կարող են այդպիսիք ստանալ տեղական խնայողական դրամարկղում մինչև 1940 թվի հունիսի 1-ը, ներկայացնելով ձեռնարկութեան կամ հիմնարկութեան տեղեկանքները վճարված մուծումների դումարի մասին: Մինչ փոխառութեան բաժնեգրութեան վճարումն ավարտելը ձեռնարկութեաններին կամ հիմնարկութեաններին հեռացող բաժանորդները պարտատոմսերն ստանում են վճարված մուծումների ամբողջ դումարով:

Իրենց աշխատանքի տեղը փոխած բանվորներն ու ծառայողները կարող են պահպանել իրենց փոխառութեան բաժնեգրութեանը: Աշխատանքի նոր տեղում փոխառութեան բաժնեգրութեանը ձեռնարկվում է նորից այն դումարով, վորպիսին բաժանորդը ցանկանում է վճարել մինչև յստ-մաս վճարումների համար սահմանված ժամկետի ավարտումը:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՎ ԱՆՅԿԱՅՆԵԼ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՈՒՄԸ

Փոխառութեան բաժնեգրութեան անցկացնելը — պետական վարկին և խնայողության ոժանդակող հանձնաժողովների պարտականութեանն է: Ոժանդակող հանձնաժողովների անելիքները կայանում են նրանում, վորպեսզի լայն ծավալված մասսայական-քաղաքական աշխատանքների հիման վրա հասնել իր կոլեկտիվի բոլոր բանվորների և ծառայողների մասնակցութեանը փոխառութեան բաժնեգրութեան դործին, ընդամենը խստիվ պահպանելով փոխառութեանը բաժնեգրվելու կամավորութեան սկզբունքը: Այդ խնդիրը պետք է կատարվի կուսակցական և պրոֆմիլիթենական կազմակերպութեանների ղեկավարութեամբ և ակտիվ ոգնութեամբ: Փոխառութեան իրացումը պետք է մանրամասնորեն նախապատրաստվի և անցկացվի վորպես կաբեռազույն տնտեսական քաղաքական ձեռնարկում:

Փոխառութեան բաժնեգրութեան անցկացնելու համար ոժանդակող հանձնաժողովները պետք է իրենց լիազորներին վաղորդ առանձնացնեն այն հաշվով, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրը սպասարկի միևնույն ցեխում, բաժնում, բրիգադում աշխատող 20—25 բանվոր-ծառայողից վոչ ավելին: Լիազորի

անձնական հեղինակութունը և բանվորների ու ծառայողների կողմից դեպի նրան տաժած վստահութունը խոշոր նշանակություն ունեն բաժնեգրութեանը հաջող անցկացնելու համար, այդ պատճառով՝ լիազորների ընտրութեանը պետք է մեծ ուշադրութեան դարձնել: Վորպես լիազորներ պետք է առանձնացնել ավելի ակտիվ և առաջավոր ընկերներին, առաջին հերթին ստախանովականներից, դերադանցիկներից, հարվածայիններից:

Լիազորները պետք է լինեն փոխառութեան լավ ազդեցություններ: Այդ պատճառով պետք է մանրամասնորեն հրահանգել նրանց, ծանոթացնելով վոչ միայն բաժնեգրութեանն անցկացնելու կարգի հետ, այլև փոխառութեան տնտեսական-քաղաքական նշանակութեան և նրա թողարկման պայմանների հետ:

Փոխառութեան իրացման, մասսայական-քաղաքական աշխատանքներ անցկացնելու մեջ պետք է մասնակցութեան ունենա կուսակցական, կոմերիտական և պրոֆմիլիթենական ամբողջ ակտիվը: Յուրաքանչյուր կոլեկտիվում պետք է անցկացնել ակտիվի խորհրդակցութեաններ՝ փոխառութեան թողարկման և բաժնեգրութեան անցկացման մասին տեղեկութեաններ տալու համար: Դրա հետ միասին անհրաժեշտ է ազդեցությունների համար կազմակերպել հրահանգչական ղեկուցում՝ նոր փոխառութեան մասին:

Շատ կարևոր է բաժնեգրութեան անցկացնելու ազդեցությունը նյութերը և բաժնեգրութեան թերթերը խնայողական դրամարկղում ժամանակին ստանալը և այդ նյութերն ըստ ցեխերի ու բաժինների բաժանելը:

Նոշոր ազդեցությունը նշանակութեան ունեն փոխառութեանը նվիրված վահանները, պլակատները, լոզունդները: Փոխառութեան թողարկման ուր նրանցով պետք է զարգարել ձեռնարկութեաններն ու հիմնարկութեանները:

Փոխառութեան թողարկման մասին ~~կատարվող~~ փոխառութեան վորդումը ռադիոյով հաղորդելուց կամ լրագրերում հայտարարելուց հետո անհրաժեշտ է անցկացնել ժողովներ և միտինգներ, վորպեսզի բանվորներին և ծառայողներին ծանոթացնել նոր փոխառութեան թողարկման նպատակների և պայմանների հետ: Ժողովներն ու միտինգներն անց են կացվում կոչ անելով բանվորներին ու ծառայողներին միահամուռ կերպով բաժնեգրվել:

փոխառութեանը և սոցիալիստական մրցում ծախսել ձեռնարկութեանները, հիմնարկութեանները և առանձին ցեխերի ու բաժինները միջև՝ բաժնեգրութեան լավագույն արդույնքների համար:

Նոր փոխառութեան թողարկմանը պետք է նվիրվեն բազմաթիւ բաժնեգրութեան իրաւունքները և պատիւ թերթերի հատուկ համարներ: Այդ համարներում պետք է պատմել, թե ուր են դնում փոխառութեանը ստացվող միջոցները, բացատրել փոխառութեան պայմանները: Հետագայում պետք է լրագրելու համար կանոնավոր կերպով լուսարանել, թե ինչպէս է ընթանում փոխառութեան բաժնեգրութեանն առանձին ցեխերում և բաժիններում, ղեկավարել բանվորների և ծառայողների ղիտողութեանները փոխառութեան մասին և բաժնեգրութեան մեջ նրանց ունեցած մասնակցութեան մասին:

Տեղական ռազմիկ հանդուգները պետք է կանոնավոր կերպով նշուի իր հաղորդներ փոխառութեան մասին: Փոխառութեանը մասնակցողներին համար անհրաժեշտ է ներգրծել նույն պէս ղեկավարվողական ինքնագործ խմբակներ, վերոնց փոխառութեան նվիրված գրական և յերաժշտական յերույթներ կարող են պատրաստել:

Բոլշևիկյան ազխտացիայի բոլոր միջոցները պետք է լայնորեն ոգտագործվեն փոխառութեան բաժնեգրութեանը հաջող անցկացնելու համար:

Թողովից կամ միտինգից հետո լիազորներն սկսում են անցկացնել բաժնեգրութեանը: Նրանք ղիմում են բանվորներին և ծառայողներին՝ առաջարկելով բաժնեգրվել փոխառութեանը: Յուրաքանչյուր լիազոր բաժնեգրութեանն անց է կացնում միայն այն բանվորներին ու ծառայողներին միջև, վերոնց կցված է ինքը: Բաժնեգրութեանը պետք է անցկացնել սկսելով ակտիվից: Նրա առաջատար ղեկը բաժնեգրութեան մեջ պետք է որինակ ծառայի մնացած բանվորներին ու ծառայողներին համար: Յուրաքանչյուր բանվոր և ծառայող իր հայեցողութեամբ վերոնցում է փոխառութեան բաժնեգրութեան գումարը:

Մի քանի բանվորներ և ծառայողներ բաժնեգրութեան անցկացման ժամանակաշրջանում կլինեն արձակուրդում: Չպետք է մոռանալ այդ ընկերների մասին և հնարավորութեան տալ նրանց ամբողջ կողմնակցութիւն հետ միաժամանակ բաժնեգրվելու փոխառութեանը: Դրա համար պետք է կապվել արձակուրդում

գտնվող բանվորների և ծառայողների հետ, տեղեկութեան տալ նրանց փոխառութեան մասին, և նրանց հանձնարարութեամբ ձեռնարկել բաժնեգրութեանը:

Բաժնեգրութեանը չպետք է ձգձգել: Լավ դրված մասնակցական-բացատրական և կողմակերպչական աշխատանքով ու ժանդակող հանձնաժողովները ձեռնարկութեաններում և հիմնարկութեաններում պետք է ձգտեն այն բանին, վերապահել բաժնեգրութեանն ավարտել ամենակարճ ժամկետում, մի քանի օրում:

Բաժնեգրութեան թերթերը, վերոնցով ընդունվում է փոխառութեան բաժնեգրութեանը, լիազորները պետք է ամեն օր հանձնեն ու ժանդակող հանձնաժողովներին, վերոնք ուղի-ուղի ստուգում են այն թերթերը, մասնավորապէս նայում են, թե կան արդյոք այնտեղ բաժնեգրողների սեփական ձեռքով տված ստորագրութեանները: Ստուգումից հետո բաժնեթերթերը և քարտերը հանձնվում են ձեռնարկութեան կամ հիմնարկութեան հաշվապահութեանը:

Ըստ բաժնեգրութեան թերթերի հաշվապահութեանը հաշվետվութեան է կազմում փոխառութեան բաժնեգրութեան ընթացքի մասին: Ու ժանդակող հանձնաժողովի նախագահի և վերլիալոր հաշվապահի կողմից ստորագրված այդ հաշվետվութեանները ներկայացվում են խնայողական դրամակալին:

Փոխառութեան բաժնեգրութեան ընթացքի մասին յեղած թերթերը պետք է հայտնի լինեն ամբողջ կողմնակցին: Պետք է բոլոր միջոցներն ոգտագործել բաժնեգրութեան ընթացքի մասին կողմնակցին տեղյակ պահելու համար: Բացի նման թերթեր տեղական լրագրում և ռազմիկով հրապարակելուց, պետք է աչքի ընկնող տեղերում սարքել հատուկ վահաններ կամ կախել պատկաններ, վերոնք ցույց տան բաժնեգրութեան ընթացքը ինչպէս ըստ ձեռնարկութեան կամ հիմնարկութեան ամբողջութեամբ վերցրած, նույնպէս և ըստ առանձին ցեխերի և բաժինների:

Ձեռնարկութեաններին և հիմնարկութեաններին ու ժանդակող հանձնաժողովները պետք է ոգնութեան ցույց տան փոխառութեան իր ուսյոնի տնտեսուհիներին, թոշակատուների մեջ իրացնելու գործում, դրա համար ոգտագործելով աշխատավորների ղեկավարատների խորհուրդների ընտրութեանների ժամանակ տեղամասերում աշխատող ակտիվը:

Ու ժանդակող հանձնաժողովներին աշխատանքը չի կարող

սահմանափակվել միայն փոխառութեան բաժնեգրութեան անց-
կացնելով: Նրանից հետո դալիս ե վոչ պակաս կարևոր ետապ
վորի ընթացքում ե փոխառութեան թողարկումը հասնում ե իր
վերջնական նպատակին, այն ե՝ փողի մուտք լինելուն:

Ռժանդակող հանձնաժողովները պետք ե կանոնավոր Դեբ-
պով ստուգեն, թե հաշվապահութեանը ճիշտ ե արդյոք կատա-
րում փոխառութեան բաժնեգրութեան մուծումների պահումները
ե թե ժամանակին ու լրիվ չափով ե արդյոք փոխանցում այդ
մուծումները խնայողական դրամարկղին:

Բանվորներն ու ծառայողներն աշխատանքի տեղը փոխելու
դեպքում՝ իրավունք ունեն պահպանել իրենց բաժնեգրութեանը
փոխառութեանը, արդարին վերստին ձեռնարկելով աշխատան-
քի նոր վայրում ե դրանով խի մինչև վերջ կատարել իրենց
պարտավորութեանը պետութեան հանդեպ: Ռժանդակող հանձ-
նաժողովները պետք ե հնարավորութեան տան ուրիշ ձեռնար-
կութեաններից ե հիմնարկութեաններից անցած բանվորներին
ե ծառայողներին պահպանել իրենց բաժնեգրութեանը: Դրա
համար ռժանդակող հանձնաժողովները պարտավոր են լիազոր-
ների միջոցով պարզել ուրիշ հիմնարկութեաններից ե ձեռնար-
կութեաններից անցած բանվորների ու ծառայողների համա-
ձայնութեանը՝ շարունակել իրենց մասնակցութեանը փոխա-
ռութեանը ե ընդունել նրանցից բաժնեգրութեան պարտա-
տոմսերի այն գումարով, վորպիսին ցանկանում են նրանք վը-
ճարել մինչև մաս-մաս վճարումների համար սահմանված ժամ-
կետի վերջնապը:

Մինչ մաս-մաս վճարումների վերջնապը բանվորներին ե
ծառայողներին արձակելու դեպքում, նրանք կարող են ժամկե-
տից առաջ վճարել իրենց բաժնեգրութեան ամբողջ գումարը
ե պարտատոմսեր ստանալ այդ գումարի չափով: Բաժնեգրու-
թեանը լրիվ չափով չվճարելու դեպքում՝ հեռացող բաժնորդ-
ներին պարտատոմսերը տրվում են իրենց կողմից վճարած մու-
ծումների գումարի չափով: Ռժանդակող հանձնաժողովները
պետք ե հետևեն այն բանին, վորպեսզի ձեռնարկութեան կամ
հիմնարկութեան հաշվապահութեանը մշտապես ունենա զանա-
զան արժողութեան պարտատոմսերի ավանս ե հեռացող բա-
ժնորդների հետ հաշվարկումներ կատարելու ժամանակ տա
նրանց վճարված պարտատոմսերը:

Փոխառութեան իրացումը կարելի չե ավարտված համարել

միայն այն բանից հետո, յերբ բաժնորդներին կտրվեն վճար-
ված պարտատոմսեր: Զեռնարկութեանների ե հիմնարկու-
թեանների հաշվապահութեանը պարտավոր ե պարտատոմսերը
բաժնորդներին բաժանել այն աշխատավարձի վճարման հետ
միաժամանակ, վորից պահվում ե բաժնեգրութեան վերջին
մուծումը: Ռժանդակող հանձնաժողովները պետք ե հետևեն այն
բանին, վորպեսզի ձեռնարկութեանների կամ հիմնարկութեան-
ների հաշվապահութեանը նախորդ ստանա խնայողական դը-
րամարկղից իրեն անհրաժեշտ պարտատոմսերի քանակը ե հանձ-
նի այն յուրաքանչյուր բաժնորդին: Բաժնորդները պետք ե
ստանան այն մասի ե արժողութեան պարտատոմսեր, վորոնց
համար բաժնեգրվել են նրանք:

Պարտատոմսերը բաժանելուց հետո ռժանդակող հանձնա-
ժողովները պետք ե հոգան այն մասին, վոր պարտատոմսատե-
րերը ժամանակին ստանան իրենց հասանելիք յեկամուտները—
չահումները կամ տոկոսները կտրոններով: Անհրաժեշտ ե պար-
տատոմսատերերին տեղյակ պահել չահումների խաղարկու-
թեանների անցկացման ե կտրոնների վճարման ժամկետների
մասին, կազմակերպել տեղեկատու սեղաններ՝ չահումները խա-
ղարկութեանների աղյուսակներով ստուգելու համար ե այլն:
Պարտատոմսատերերին կուլտուրապես սպասարկելու ամենորյա
հոգսը ռժանդակող հանձնաժողովների պարտականութեանն ե
տասնյակ միլիոնավոր աշխատավորների նկատմամբ, վորոնք
իրենց միջոցներով կամավոր կերպով մասնակցում են սոցիա-
լիստական շինարարութեան ֆինանսավորմանը:



ՀՀ Ազգային գրադարան



Պատ. խմբագիր՝ Ա. Յարգսյան
 Թարգմանիչ՝ Գ. Գեվորգյան
 Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
 Սրբագրիչ՝ Մ. Թումանյան

Գլավիտի լիազոր՝ Զ—1161. Հրատ. 5275.

Պատվեր 450. Տիրաժ 5000.

Հանձնված է արտադրության 9 հունիսի 1940 թ.

Ստորագրված է տպագրության համար 19 հունիսի 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65